

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵԹՈՂԱԿԱՆ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ  
Զաղոյան Ա. Մ.**

Հոդվածում ներկայացվում են ընտանեկան դաստիարակության թերացումների պատճառները, դրանցից բխող բացասական հետևանքները: Դիտարկվում են նաև ընտանեկան խորհրդատվության իրականացման մոդելները: Հոդվածի նպատակն է՝ ընդգծել ընտանեկան խորհրդատվության նշանակությունը որպես մեթոդական ուղեցույց դասղեկական աշխատանքների իրականացման գործընթացում՝ միտված ընտանեկան դաստիարակության սխալների շտկմանը համընդհանուր ներառականության պայմաններում:

**Բանալի բառեր.** դասղեկ-խորհրդատու, բուլլինգ, հաղորդակցման մշակույթ, «լուսավորող», «հոգեդինամիկ», «կառուցվածքային», «տրանսակցիոն» մոդելներ:

Հայտնի է, որ ընտանիքը երեխային շրջապատող առաջին սոցիալական միջավայրն է, որտեղ երեխան սովորում է դաստիարակության այբուբենը: Վազգեն Առաջինը, ընդգծելով լիարժեք ընտանիքի գերակա նշանակությունը երեխայի կյանքում, նշում է. «Հրաշալիքը ծնունդի և սրբությունը մայրության. ահա հիմքը ընտանիքին: Ձի ընտանիքն է խորանը այդ հրաշքին և աղբյուրը մայրական սրբության» [2, էջ 64]:

Սույն հոդվածը մի փորձ է ներկայացնելու ընտանեկան դաստիարակության մեջ ձևավորված դժվարությունների պատճառները, դրանցից բխող հետևանքները, ցույց տալու ընտանեկան խորհրդատվության նշանակությունը որպես աջակցություն ծնողներին և մեթոդական ուղեցույց դասղեկներին:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտանեկան հարաբերությունների շեղումները, ընտանեկան դաստիարակության սխալները բացասաբար են անդրադառնում երեխայի սոմատիկ և մտավոր զարգացման վրա: Շատ հետազոտողներ նշում են, որ մանկական ներոզների և որոշ հոգեկան խանգարումների առաջացման հիմնական պատճառները կապված են ընտանեկան դաստիարակության սխալների և ընտանիքում տիրող կոնֆլիկտային հարաբերությունների հետ: Այսպես, օրինակ, Կ. Խորնիի դիտարկման համաձայն՝ ընտանիքի անդամների միջև տարաձայնությունների դեպքում երեխան ունենում է լքվածության զգացում՝ ձգտելով աջակցության [4, էջ 27], մինչդեռ ըստ Բերնսի՝ այն երեխաների մոտ, որոնք ունեն համերաշխ և կազմակերպված ընտանիքներ, զարգանում է բարձր ինքնագնահատական [3, էջ 149]:

Դիտարկենք նաև հետևյալ օրինաչափությունը. անչափահասների մոտ ագրեսիվ պահվածքի՝ «բուլլինգի» դրսևորման հակումները պայմանավորված են նրանց ընտանիքներում ձևավորված այնպիսի իրավիճակներով, որոնք կապված են. **ա)** ընտանիքի մեծահասակների ինչպես միմյանց, այնպես էլ երեխայի նկատմամբ դրսևորած կոպտության, **բ)** ծնողների և երեխաների հետաքրքրությունների միջև տարբերությունների, **գ)** ծնողներից մեկի վատ պահվածքի, **դ)** ընտանիքում երկու սերունդների (տատ-մայր) միջև հարաբերությունների կարգավորման հետ:

Ժամանակակից հասարակության մեջ ավելի նկատելի է դառնում ընտանիքի ճգնաժամը, որն արտահայտվում է նրանում, որ ընտանիքները ավելի վատ են իրականացնում իրենց գլխավոր գործառույթը՝ երեխաների դաստիարակությունը: Ծնող-երեխա անհամաձայնությունը հաղթահարելու համար ծնողները պետք է օժտված լինեն հոգեբանական և մանկավարժական բավարար գիտելիքներով, որպեսզի կարողանան ճիշտ կազմակերպել երեխայի դաստիարակությունը [2, էջ 153]: Շատ դեպքերում ծնողները փորձում են դաստիարակությունը իրականացնել ճնշման և վախի միջոցով, մինչդեռ Վ. Ն. Սոկոլովան նշում է. «Թե՛ ծնողները և թե՛ մանկավարժները չպետք է ճնշեն երեխաներին՝ նրանց մեջ առաջացնելով վախ: Անհրաժեշտ է երեխայի մեջ արթնացնել միտքը, զարգացնել հնարամտությունը և սովորելու ցանկությունը» [6, էջ 86]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դաստիարակչական աշխատանքների պատասխանատվության հիմնական մասը դպրոցում

վերապահված է դասդեկներին, ուստի ընտանեկան դաստիարակության ուղղորդման համար անհրաժեշտ է, որ դասդեկները ծանոթանան ընտանեկան խորհրդատվության տեսությանը: Մեր հոդվածի շրջանակներում մենք ամփոփ ձևով կներկայացնենք մանկավարժական խորհրդատվության բաղադրատարրերից մեկը՝ ընտանեկան խորհրդատվության տեսությունը: Նշենք, որ ընտանեկան խորհրդատվության անհրաժեշտությունը առավել կարևորվում է համընդհանուր ներառական կրթության իրականացման պայմաններում, քանի որ ծնողների հետ անցկացվող գրույցները զարգացման շեղումներ ունեցող երեխաների կոմպլեքս ուսումնասիրության բաղկացուցիչ մասն են կազմում: Տեղին է նաև նշել, որ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության արդյունավետ իրականացման համար վճռորոշ նշանակություն ունի ծնողական կողմի հետ տարվող համագործակցային աշխատանքը: Շատ դեպքերում, երբ երեխայի մոտ հայտնաբերվում է զարգացման խանգարումներ, ծնողները հրաժարվում են ընդունել այդ փաստը կամ շատ դժվարությամբ են համակերպվում դրա հետ: Նման պարագայում նրանք իսկապես օգնության կարիք ունեն: Ծնողների հետ անցկացվող գրույցների ընթացքում պետք է պարզել ծնող-երեխա հաղորդակցության տեսակը, քանի որ ընտանեկան դաստիարակության իրականացման կարևոր նախապայման է հանդիսանում ներընտանեկան հաղորդակցության ճիշտ կազմակերպումը: Պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ ծնողի հետ երեխայի փոխազդեցությունը հանդիսանում է շրջապատող աշխարհի հետ փոխազդեցության առաջին փորձը: Այս փորձը ձևավորում է այլ մարդկանց հետ շփվելու ոռշակի մոդելներ, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ: Յուրաքանչյուր հասարակության մեջ կուտակվում է ծնողների և երեխաների հաղորդակցման որոշակի մշակույթ, առաջանում են սոցիալական կարծատիպեր, ընտանեկան դաստիարակության դրվածքներ: Ընտանեկան խորհրդատվության դրույթներին ծանոթանալով՝ դասդեկները կօգնեն ծնողներին ձևավորել ծնող-երեխա արդյունավետ հաղորդակցություն: Այսպես, օրինակ, Խ. Ջայնոտտը առանձնացնում է ծնող-երեխա հաղորդակցության սկզբունքները. **ա)** բոլոր իրավիճակներում ծնողները պետք է պաշտպանեն երեխայի դրական ԵՍ կերպարը, **բ)** պետք է խոսել երեխայի արարքի մասին՝ խուսափելով նրա անձնական բացասական որակումներից, **գ)** ծնողը պետք է լինի երեխայի հետ համագործակցության նախաձեռնողը [6, էջ 122]:

Ընտանեկան խորհրդատվությունը իրականացվում է տարբեր մոդելներով, այդ թվում՝ «լուսավորող», «հոգեդինամիկ», «կառուցվածքային», «տրանսակցիոն» և այլն: Հոդվածի շրջանակներում համառոտ անդրադառնանք այդ մոդելներին: «Լուսավորող» մոդելով խորհրդատվություն անցկացնելիս խորհրդատուն ձգտում է փոխել ոչ թե երեխային, այլ շրջապատող միջավայրը, առաջին հերթին՝ ծնողական ազդեցությունը երեխայի վրա և ըստ այդմ ձևավորել նրա պահվածքը: Խորհրդատուն կատարում է լուսավորողի դեր և սովորեցնում ծնողներին ախտորոշել երեխայի պրոբլեմային պահվածքը, դրա դրսևորման պատճառները և վերլուծել հնարավոր հետևանքները: Խորհրդատվության գործընթացում ծնողները խորհրդատուից ստանում են մանրամասն տեղեկատվություն ընտանեկան դաստիարակության հայտնի ոճերի և այն չափանիշների մասին, որոնք հնարավորություն են տալիս կիրառել դրանք երեխաների խառնվածքին համապատասխան: «Հոգեդինամիկ» մոդելի հիմքում ընկած է այն գաղափարը, որ ընտանիքի հուզականային համակարգը, գործելով որպես միասնական ԵՄ, ազդում է երեխայի կայացման վրա՝ ձևավորելով երկու տիպի անձնավորություն՝ ընտանիքից անկախ և ընտանիքին ձուլված: Արդյունքում տարբերակված կլինի նաև այդ երեխաների և ընտանիքի հետ տարվող խորհրդատվությունը: «Կառուցվածքային» մոդելում հիմնական ուշադրությունը հատկացվում է ընտանիքի կառուցվածքային կազմակերպմանը, որը, ըստ Խ. Մինուխինի, ձևավորում է պահանջների և գործառնությունների անտեսանելի մի ցանց: «Կառուցվածքային» մոդելում, որպես ընտանեկան փոխհարաբերությունների կարգավորիչ, հանդես է գալիս ծնողների հեղինակությունը և ընտանեկան դերերի բաշխվածությունը: Ս. Մինուխինի դիտարկման համաձայն՝ կառուցվածքային իմաստով ընտանեկան խորհրդատվությունը ոչ թե հատուկ ցուցումներով մեթոդների խումբ է, այլ մտածողության ուղի, որի հիմքում ընկած է այն գաղափարը, որ ընտանեկան պրոբլեմները կարող են ընկալելի լինել միայն համատեքստային ուսումնասիրության դեպքում [9, էջ 8]: Երեխայի անհատական և տարիքային զարգացման դժվար իրավիճակներում առաջացող խնդիրների հետ կապված՝ ծնողները խորհրդատու-դաստիարակից կարող են ստանալ բանավոր և գրավոր հրահանգներ, որոնք ուղղվելու են երեխայի պահվածքի մեջ դրական փոփոխությունների առաջացմանը: Նման մեթոդներից մեկը երեխայի մոտ ինքնահսկողության ընդունակության զարգացումն է, որը նպաստելու է տարբեր իրավիճակներում երեխայի գոյատևման և

ինքնահաստատման կարողության ձևավորմանը: Ս. Գևորգյանը նշում է. «Անհատը որքան հարուստ է հոգեպես, այնքան զորեղ են նրա հոգեպաշտպանական մեխանիզմները, ինքնակառավարման և ինքնատիրապետման կայունությունը» [1, էջ 155]:

Ամփոփելով նշենք, որ, կարևորելով ընտանեկան դաստիարակության նշանակությունը հասկապես ներառական կրթության իրականացման պայմաններում, պետք է նպաստել դրա արդյունավետ ու նպատակաուղղված իրականացմանը: Այդ նպատակով նախատեսում ենք, որ դասղեկները անցնեն որոշակի ուսուցողական դասընթացներ, ծանոթանան ընտանեկան խորհրդատվության իրականացման ձևերին, մեթոդներին և մոդելներին: Արդյունքում ենթադրվում է, որ այդ տեսությունը կլինի այն մեթոդական ուղեցույցը, որի օգնությամբ կհաղթահարվեն ոչ միայն դասղեկական աշխատանքներում առաջացող տարաբնույթ դժվարությունները, այլև կլուծվեն ընտանեկան դաստիարակության ընթացքում ձևավորվող խնդիրները:

**СЕМЕЙНОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ КАК МЕТОДОЛОГИЧЕСКОЕ  
ПОСОБИЕ ПО РАБОТАМ КЛАССНОГО РУКОВОДИТЕЛЯ В  
УСЛОВИЯХ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ**

**Задоян А. М.**

В статье представлены причины недостатков семейного воспитания, возникающие сопутствующие негативные последствия. Также рассматриваются модели семейного консультирования. Цель данной статьи - подчеркнуть важность семейного консультирования как методического пособия при проведении классного руководства, направленных на исправление ошибок семейного воспитания в контексте всеобщей инклюзии.

**Ключевые слова:** педагог-консультант, буллинг, культура общения, «просветительские», «психодинамические», «структурные», «транзакционные» модели.

**FAMILY CONSULTATION AS A METHODOLOGICAL GUIDE TO  
CLASSROOM ON CONDITION OF WORKS INCLUSIVE EDUCATION**

**Zadoyan A. M.**

The article presents the reasons for the shortcomings of family education, the resulting negative consequences. Family counseling models are also

discussed. The purpose of this article is to emphasize the importance of family counseling as a methodological aid when conducting classroom teaching work aimed at correcting the mistakes of family education in the context of universal inclusion.

**Keywords:** teacher-counselor, bullying, communication culture, “enlightening”, “psychodynamic”, “structural», «transactional” models.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ս. Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում: Երևան: «Զանգակ»-97: 2002: 208 էջ:
2. Զադոյան Ա. Ս. Երեխայի և ընտանիքի մանկավարժական խորհրդատվությունը՝ որպես դպրոցի զարգացման պայման: //Հանրապետական գիտաժողովի նստաշրջանի նյութեր՝ նվիրված ԳՊՄԻ հիմնադրման 75-ամյակին: 9-10 հոկտեմբերի 2009թ.: Գյումրի: «Դպիր»: էջ 152-159:
3. Վազգեն Ա. Հայրապետ Հայոց. Գիրք չորրորդ, կոնդակներ, քարոզներ, ելույթներ «Մայրերի օրվա» առթիվ՝ տպված ԱՄՆ-ում անգլերեն թարգմանությամբ հանդեսի 1987թ. «Leaders» Հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր միացյալ համարներում: Վաշինգտոն: 123 էջ:
4. Бернс Р. Я. Концепция и Я-образы/Самосознание механизмы личности. Самара: Изд. “Бахрах” 2003. 656 с.
5. Хорни К. Наши внутренние конфликты Серия: Психологические технологии. Москва. Изд. “Академический проект”. 2007. 224 с.
6. Певзнер М. Н., Зайченко О. М., Горычева С. Н., Аверкин В. Н., Ширин А. Г., Петров А. В. Педагогическое консультирование /Под ред. В. А.Сластенина и И. А. Колесниковой. Учебное пособие М.: Изд. “Академия”. 2006. 319 с.
7. Соколова В. Н., Юзефович Г. Я. Отцы и дети в меняющемся мире. Кн. для учителей и родителей. М.: Изд. “Просвещение”. 1991. 223 с.
8. Minuchin S. Families and family therapy. Cambridge MA. 1974. 268 p.

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

*Զադոյան Ա. Ս. – մանկավարժական գիտությունների թեկնածու*

*Շիրակի պետական համալսարան*

*Էլ. փոստ՝ [anahit28-65@mail.ru](mailto:anahit28-65@mail.ru)*

*Տրվել է խմբագրություն՝ 31.08.2021*

*Գրախոսվել է՝ 02.12.2021*